





պատարագ անել, ոչ գոյր սրկի, խաչ, աւե-  
տարան. երթային, կաշառ տային, բերէին  
10 շուրջառ եւ այլ ինչ եւ մատուցանէին պատա-  
րագ, եւ դարձեալ տանէին փութով: Եւ այն-  
չափ աւելցաւ եւ շատացաւ պարտքն, մինչ զի  
սրբութեան տեղիսն եւս յափշտակեցին ի ձե-  
ռաց Հայոց, զի ոչ մնաց եւ ոչ ինչ: Վա՛յ ինձ,  
15 վասն իմ ծովացեալ մեղացս մատնեցան սրբու-  
թիւնք եւ Քրիստոսի տնօրինականաց տեղիքն  
ի ձեռս այլազգաց, որպէս ի հնումն Տապա-  
նակն: Այլ եւ ինքն Պարոնտէրն ասաց լալով,  
թէ ժամանակ մի ըստ սովորութեան՝ Ծնըն-  
20 դեան օրն գնացաք ի Բեթղէհէմ. եւ չունէաք  
խաչ՝ շուր օրհնել. հանեալ Մաշտոցէն փոքրիկ  
խաչն եւ այնով օրհնեցաք. եւ ի ժամ լուսոյ  
բխման չերեւէր հայի սուրբ Յարութիւնն  
վասն ամօթոյ եւ նախատանաց, զի ոչ տեղիք  
25 ունէաք եւ ոչ անօթք եւ ոչ զգետտ: Զայս ա-  
մենայն կրեալ ազգս Հայոց շուարեալ, տարա-  
կոյս եղեալ նկուն դարձաւ. եւ եղեւ ծաղր եւ  
նախատ եւ այսն ի մէջ ամենայն քրիստոնէից:  
Եւ ոչ ոք կարաց օգնել կամ թափել դուրբ  
30 Երուսաղէմ ի պարտուց. ո՛չ կաթողիկոս, ո՛չ  
եպիսկոպոս, ո՛չ վարդապետ, ո՛չ խոճայ, ո՛չ  
մեծամեծք, ո՛չ փարթամք. մինչեւ ողորմածն  
Աստուած ինքն գթացեալ ողորմեցաւ եւ ոչ ի  
սպառ անտես արար եւ ոչ ցանկ բարկացաւ.  
35 այլ ետես, այց արար եւ դարման ետ, օգնա-  
կան եւ փրկիչ եղեւ յուսացելոց իւրոց, բառ-  
նալով զսուգ եւ զտրտմութիւն եւ գնախատինս  
մեր. եկն ի խնդիր մոլորելոց եւ կորուսե-  
լոցս:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

40 Որ ի թվին Հայոց ՌԾԹ, յամենան յու-  
լիսի ԺԸ. զարթոյց Տէր Աստուած զոմն Ենկի  
խոճայ Ամթեցի, (այս ինչ) <sup>1</sup> անուն, որպէս ի  
հինն՝ Զօրաբարէլ, զոր նա մեծաւ հողաբար-  
ձուութեամբ ջանաց եւ հող տարեալ գնաց ի  
45 Հալապ վասն սուրբ Երուսաղէմայ պարտուց.  
եւ անդ գտեալ անվանի խոճայս եւ վաճառա-

19 սովորութեան:

<sup>1</sup> Միմէն Ամթեցոյն անունն համար դատարկ  
տեղ է ձգած: Հանգանակութեան մասնակցած են հե-  
տեւեալ խոճաները. Ախիջան, Աւետ, Դարիպջան,  
Միրզէ, Միրաք, Փիլաք եւ Փոյառ վանեցիները, Առա-  
քել, Աւետիք, Զաքարէ, Ոսկան, Սաֆար, Սուքիս եւ  
Փանոս ջուղայեցիները, Զէխջան Բաղիշեցի, Թուճաջան  
Ամթեցի, Բաղդասար Ունայեցի, Մազաւա, Պետրոս  
(Պէտրիկ) եւ վանտին հայկեցիները եւ ուրիշներ. Սա-  
ւալանեան, էջ 673. Աղաւունտի, Միաբանք, էջ 81:  
«Ենկի խոճայ Ամթեցի» նոյն է հաւանօրէն խոճայ Թու-  
մաջանի հետ:

կանս. դրեց եւ այլ մայրաքաղաքն գալ հասա-  
նել ի Հալապ, վասն խորհրդոյ քննել, թէ որ-  
պէս կարելոցն ազատել ի պարտուց զԵրուսա-  
ղէմ: Արդ նորոգողն ամենայնի Տէր Յիսուս նա  
50 ինքն վերստին կանգնեաց եւ յորդորեաց եւ  
դուրթ եւ սէր արկ ի սիրտս նոցա. որ բարի  
կամօք եւ յօժար սրտիւ, բարեպաշտ եւ աս-  
տուածասէր տանուտէրքն ելեալ աշխարհաց  
եւ դաւառաց, վարդապետօք եւ քահանայիւք  
55 միաբան, միակամ, միախորհ՝ եկեալ հասին  
ի Հալապ քաղաքն եւ նստեալ անդ խորհուրդ  
արարին իրեք ամիս եւ տեղակացան իմացեալ  
զամենայն իրս եւ զբանս տարակուսանաց, որ  
ՍՌ դուռուչ է: Այլ ճար եւ հնար չի գտան,  
60 միայն վճարել զպարտքն: Այլ ապա սկսան  
յորդորել զմիմիանս եւ առատաձեռնել սուրս  
յորովս եւ դուարթս, ընչաւէտ եւ փարթամս.  
եւ էր ամենայնի դուրս եւ էրէցփոխան Ենկի-  
խոճայն: Եւ սկսան ամենեքեան տալ ըստ չա-  
65 փուլ եւ կարողութեան փառաւոր եւ անվանի  
սուրբաբարքն. ոմն Ռ, ոմն ԲՌ, ոմն ԵՌ եւ  
այլն դուռուչ. նաեւ ԺՌ տվողք կայր. իսկ այլ  
աղքատք ձ, Մ եւ այլն. եւ ժողովեալ բազում  
70 դանձս, աւելի քան զպարտան. զի եւ աղքատք  
եւ մուրացելիք եւ կոյրք եւ կանայք եւս տային:

Եւ որոշեալ քսան այր խոհեմ եւ իմաս-  
տուն՝ պատրաստեցան եւ աճապարեցին եւ  
մտին ի Սուրբ Երուսաղէմ ընդ Ենկիխոճային:  
Եւ գնացեալ ի բերթն՝ ծանուցին պարոնին  
75 զիս իրացն, թէ Մեք կամիմք վճարել զպարտս  
ամենայն: Եւ հրամայեաց պարոնն քարոզ  
կարդալ ի մէջ քաղաքին, զի ամենայն փոխա-  
տուքն գան առ պարոնն՝ բերելով զամենայն  
զբաւսն ընդ ինքեանս. եւ վա՛յ այն մարդուն,  
80 որ մինչ իրեք օրն ձայն չածէ կամ զբաւըն չի  
բերէ, եւ չառնու զվճարքն. այնուհետեւ նորա  
փոխ տված դրամն կորնչի: Եւ այսպէս բա-  
զումք եւ յորովք գային, բերէին. եւ նոքա  
վճարէին սիճիլով, հուճաթով՝ առջեւ պարո-  
85 նին եւ դատուն: Եւ յորժամ վճարեցին՝ դար-  
ձեալ բողոք կարդացին. թէ ոք փոխ ետուր  
կամ զբաւ ունի եւ ոչ գայ երեւի, յետոյ թէ՛  
զիւր, թէ՛ զբաւ, թէ՛ այլ ինչ ցուցանէ, մի լիցի  
90 նմա դատ եւ իրաւունք:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ ՊԱՐՈՆՏԵՐԻ

Եւ իբրեւ հատուցին զամենայն պարտան  
մինչեւ ցետինն բնիոն, այլ խորհուրդ նստան  
եւ այլ թատպիր, թէ որպէս կամ զիարդ ա-

62 յառատաձեռնել: — 63 յորով: — 66 կարողու-  
թեան: — 71 մուրացիք:

բացեն, կամ զո՞ դիցեն առաջնորդ եւ հովիւ,  
95 այլ եւ հողէբարձու սուրբ Երուսաղէմայ՝ որ  
յաստուածակողմ լիցի հողացող: Զոր եւ ի  
կոչմանէն Աստուծոյ եւ հաճութեամբ ամենե-  
ցուն ընտրեցին զոմն Գրիգոր անուն մոնոպոն՝  
Տաթևու գաւառէն, այր առաքինի եւ ճգնա-  
100 զգեաց, խստակրօն ի պահս եւ աղօթս, որ ի  
մանկութենէ ստացեալ ունէր զառաքինու-  
թիւն. ելեալ Նախըւանայ գայ ուխտիւ յե-  
րուսաղէմ. եւ երկրպագեալ Քրիստոսի սնօ-  
րուսողէմ. եւ երկրպագեալ Քրիստոսի սնօ-  
105 ծածուկ տեղիս, երբեմն յայնկոյս Յորդանանու  
եւ երբեմն յայնկոյս, ժամանակ մի Փորձու-  
թեան լեռուն եւ ժամանակ մի այլ թագստի  
տեղիս՝ ճնշելով եւ մաշելով զմարմինն ի քաղց  
եւ ի ծարաւ, եւ երկու-իրեք օրն մի անգամ  
110 ճաշակելով, եւ զայն սակաւ պաքսիմատս  
վասն հողէպահութեան:

Զսա հրաւիրեալ օրհնեցին մոնոպոն եւ  
լուսարար. ի զամենայն ինչ յանձնեցին ի ձեռս  
նորա: Իսկ նա փախչէր եւ հրաժարէր յայն-  
115 մանէ. եւ բազում անգամ գտեալ՝ դարձուցա-  
նէին Երուսաղէմ եւ հարկիւ ստիպէին կա-  
տարել զպատվէրն: Զոր յետ այսր ամենայնի  
յօժար կամօք եւ ուղիղ սրտիւ ծառայէր եւ  
սպասաւորէր սուրբ տեղեացն: Եւ յետ ամաց  
120 ւուրց ինչ օրհնեցին քահանայ. եւ յետ ամաց  
ինչ՝ աղերսիւ եւ հարկիւ յանձնեցին ի նա  
եւ խոճայք դարձան ի տունս իրեանց: Իսկ նա  
օր ըստ օրէ յաւելոյր ի պահս եւ աղօթս եւ ի  
125 ճգնութիւնս. եւ նստեալ յաթոն բազում բա-  
րիս եւ երախտիս արար. զորս ի բազմաց  
սակաւս ասացից, զորս լուսայ եւ զորս աչօք  
տեսայ:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՅՈՒ ՊԱՐՈՆՏԵՐԻ

Նախ եւ առաջ զի նորոգեաց բազում եկե-  
130 ղեցիս ի վիճակն Հայոց, քաղաքն եւ ի դուրս՝  
թուով ԺԲ. եւ ի սուրբ Յակոբ, Հրեշտակա-  
պետն եւ սուրբ Փրկիչ շինեաց օթեանս հիւ-  
րոց եւ հիւանդաց, եւ խուցս վիճալէն միա-  
վայելուչս, պարտէզս, այգիս եւ բարեկարգու-  
135 եւ այլ բազում շինութիւնս եւ բարեկարգու-  
եւ գեղեղեցիս նոր նորոգեաց: Ի սորա ժամա-

95 Երուսաղէմայ: — 102 դա: — 113 անձնեցին:  
— 124 աւելոյր: — 134 գեղեցիկ:

<sup>2</sup> Գրիգոր Պարոնտէր եպիսկոպոս ձեռնադրուեցաւ  
Աւետիս կաթողիկոսէն 1613, Ապրիլ 5ին (Կոնդակ):

նակն բարգաւաճեալ պերճացաւ եւ վայելչա-  
ցաւ վիճակն Հայոց:

Ապա զարդարեաց գեղեղեցիս եւ զվանո-  
րայս քահանայիւք, վարդապետիւք, վարդե-  
տիւք, կղերիկոսօք եւ ամենայն ուխտի ման-  
կամբք. նաեւ շուրջառօք, զգետտիւք, կանթե-  
140 ղօք, ջահիւք եւ լապտերօք. եւ այլ անօթիւք  
տակեղէն եւ արծաթեղէն. այլ եւ մեծամեծ  
մարդապոյ կանթեղօք, մարդապոյ խաչիւք,  
աղիւ գրանօք, մեծ բուռվառօք, ոսկիապատ  
աւետարանօք, ինկատիօք եւ այլովք: Այլ եւ  
տեսի անգին շուրջառնի, բազմաձախ անօթք,  
150 որ եւ ի Լէհ ոչ գտանիւր: Սա ետ գրել գիրս  
նոր, եւ զամենայն հինս կազմեաց եւ նորո-  
գեաց: Սա սահմանեաց զկարգ եւ զկրօնս վա-  
նօրէից, զոր յառաջագոյն խանդարեալ եւ ա-  
ւիրեալ էր: Սա հաստատեաց ամենայն եկե-  
155 լիւրեալ էր: Սա հաստատեաց ամենայն եկե-  
ղեցիս լուսարար, ժամբար, զի ի տվէ եւ ի գի-  
շերի անխափան կատարեացն աղօթք եւ վառ-  
ման լիցին կանթեղք եւ ջահք: Սա կանոնեաց  
յերեկօրէ գիշերապաշտօն առնել եւ հսկումն  
ստանակացութեամբ եւ դուրթ կանոն սաղմոս  
160 ամենայն աւուր երգել:

Սա շինեաց զմայլեթայարկ վանորայս եւ  
անառիկ ամրոցիւք պարսպեաց բազմաձախ  
չրեղաշուք աշտարակօք, որ են այսք. Սուրբն  
ֆրկիչ, սուրբ Հրեշտակապետ, սուրբ Թորոս,  
165 սուրբ Առաքեալ, սուրբ Սարգիս եւ այլն: Սա  
սուրբ Առաքեալ, սուրբ Սարգիս եւ այլն: Սա  
սուրբ Բազում կարգ եւ զսահման քահա-  
նայից, վանօրէից, միակեցաց եւ աշխարհա-  
կանաց. զի բոլոր տարին միաճաշակ լիցին. եւ  
զայն պահօք, բայց ի Շարաթ եւ ի Կիրակէն եւ  
170 հինգ Նաւակատինս միայն լուծանել ի ձուկ,  
ի ձէթ, ի կաթ եւ այլն: Սա վասն շինութեան  
սուրբ եկեղեցեաց, վանօրէից բազում զգվանս  
եւ ազգի ազգի դժարանս եւ նեղութիւն  
կրեաց ի չէխէրուն, պարոնէն եւ այլոցն. բա-  
175 զում անգամ բանտ մտանելով, յորով անգամ ի  
զլթայս եւ յերկաթս պրկելով, ի կապանս կա-  
լով, նախատինս, ահ եւ երկիւղ կրելով. եւ  
վճիռ մահու ի վերայ նորա հատանելով: Իսկ  
նա զյոյսն առ Աստուած եղեալ եւ գնա միայն  
180 յօգնութիւն կոչեալ ի չարչարանաց ոչ երկն-  
չէր, եւ ի տանջանաց զերեսս ոչ զարձուցա-  
նէր, այլ եւ ի մահուանէ ոչ զանդիտէր, ըստ  
Պաւլոսի, թէ Ով կարէ մեկնել զմեզ ի սիրոյն  
Գրիստոսի, թէ սուր, թէ չարչարանք թէ մահ  
185 եւ թէ այլ ինչ. եւ զարձեալ թէ Զարչարանք

150 շուրջառնի: — 163 յամրոցիւք: — 176 ոլով:  
— 177 անգամ զլթայս եւ երկաթս պրկելով:

որ վասն Գրիստոսի՝ կեանք են. եւ դարձեալ՝  
 Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա  
 Գրիստոսի ծառայ ոչ էի. եւ դարձեալ թէ  
 190 Անձկացեալ եմ ի գանս, ի բանտս, ի տանջանս  
 եւ այլն: Այսպէս յորով չարիս կրելով բազում  
 բարեաց պատճառ լինէր. եւ յառաջ տանէր  
 զիւր բարի խորհուրդն եւ ի կատարում ածէր.  
 եւ Աստուած օգնական էր նմա. ճակատէր,  
 195 զիմամբառէր ընդ մեծամեծս եւ ընդ դազիր  
 զբարտառոյ Արարացիս. եւ ամենայնի յազիտոյ  
 դատանէր զօրութեամբն Աստուծոյ, ըստ այնմ.  
 Եթէ Աստուած ի մեր կողմ իցէ, ո՞վ իցէ մեզ  
 հակառակ:

ԽՍՏԱՄԲԵՐ ՎԱՐՔ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ ՊԱՐՈՆՏԵՐԻ  
 200 Եւ էր անձամբն բարի, գործովք եւ վա-  
 րիւք սուրբ եւ առաքինի. լեզուն՝ ճարտար՝  
 իմաստիւք լի, ամենեցուն ահարկու եւ դար-  
 հուրելի. զի ոչ ոք կարէր զգէմն ունել, այլ  
 պապանձեալ եւ ափ ի բերան եղեալ լռէին:  
 205 Երբեմն եւ տուգանք տայր ձ, Մ, Յ դուռուչ  
 եւ բանն յառաջ տանէր: Եւ այլ բազում չէնք,  
 կարգ եւ սահմանք եւ ուղղութիւնս արար եւ  
 առնէ մինչեւ ցայսօր: Չոր այլ տեղ չտեսար  
 այսպէս չէն վանք, որ ունի եօթնասուն  
 210 հոգի: Այլ եւ ինքն ջանայ, աշխատի ցայդ եւ  
 ցերեկ. սակաւ ուտէ, սակաւ ննջէ. եւ զգի-  
 շերն արթնութեամբ հանէ ի դուռն յաղօթան  
 Աստուծոյ. եւ յորժամ նեղի ի քնոյ՝ մազեղի-  
 նաւն զոր զգեցեալն է՝ հոլանի առանց գօտոյ  
 215 արձակման ընկողմէր ի վերայ գեամախշտի՝  
 սուղ ինչ նիրհելով, եւ դարձեալ յառնէր եւ  
 դայլ բազում առաքինութիւնս ծածուկ եւ  
 ճշնութիւնս կատարէր. զոր եւ մեք աչօք տե-  
 սարք եւ ականջօք լուարք:  
 220 Յորժամ շինէր զՓրկիչն՝՝ նախանձեալ  
 չէխերն մատնեցին պարոնին, թէ Գրիգոր  
 մաթրանն նենկիւ եւ թշնամութեամբ ընդ  
 Փռանկս միաբանեալ մաթառիս շինէ եւ ամ-  
 րոց՝ պարութ եւ գէնք պահելու. զի քաղքէն  
 225 դուրս էր Սուրբ Փրկիչն. եւ յոյժ տաւի արին,

196 յարբացիս: — 204 յափ: — 212 աղօթան:  
 — 214 սրկեցեալն: — 225 ոյժ:  
 1 Եկեղեցիս, ուր յետոյ Գրիգոր Պարոնտէրի  
 նշխարները ամփոփուեցան, կ'երեւայ թէ աւերակ վի-  
 ճակի մէջ էր այն տանն: Երուսաղէմի հնագոյն եկեղե-  
 ցիներէն էր. 1479ին Ֆելիքս Ֆարբի կը պատմէ թէ  
 հայ ուխտաւոր մը նորոգել տուած ըլլայ զայն: Անձա-  
 ոթ էր այլուստ թէ վերջին նորոգութիւնը (կամ ի հի-  
 մա՞նց շինութիւնը) 1613—1616 տարիներուն Գրիգորի  
 ձեռքը եղած է. տե՛ս Աղաւառի, Հայկական հին  
 վանքեր եւ եկեղեցիներ Ս. Երկրին մէջ. Երուսաղէմ  
 1931, էջ 82—84:

որ պարոնն կալաւ զնա եւ եգ ի բերթն. եւ նա  
 ոչ հողայր զիւրմէ, որ վճիռ հատին մահուան.  
 այլ միշտ առաքէր՝ թող բանեցնեն. զոր ետոյ  
 եւ ինքն ազատեցաւ: Դարձեալ օր մի մինչ էր  
 ի վերայ արվեստաւորաց՝ շէխերն ի վերուստ 230  
 ընկեցին քար մի ի վերայ գլխոյն. զոր անկաւ  
 ի վերայ ձեռաց եւ զբութ մասն տրորեց. որ  
 չունի դայն մասն մինչեւ ցայսօր: Եւ զի էր  
 ճարտար, հանձարեղ եւ դրամի ուժով դամե-  
 նայն ինչ զոր կամէր՝ կատարէր. մինչ զի պա- 235  
 րոնն եւս ամաչէր եւ պատկառէր ի նմանէ:  
 Որոց զյօքունս թողեալ, զի մի բազմութիւն  
 խօսից տաղտկութիւն առնէ լսելեաց եւ յա-  
 ճախութիւն բանից ճանճրութիւն եւ քուն ածէ  
 աչաց: Չոր ես յետնեալ ապիկարս մօխրա- 240  
 մած դիմօք եւ արտասովոր աչօք հայցեմ  
 ապէնիազ Տեառնէն, զի ընդ երկայն աւուրս  
 արասցէ եւ պարագայծ ամօք պահեսցէ զնա  
 մինչեւ ի խորին ծերութիւն, անսասան կենօք  
 ի պայծառութիւն սուրբ եկեղեցեաց եւ ի պար- 245  
 ծանս տառապեալ ազգիս Հայոց ի փառս Աս-  
 տուծոյ. ամէն:

ԳՐԱՒՈՒՄՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵԿԵՂԵՑՈՒԹՅՆ  
 Բայց վայ հազար բերան, զի յայսմ ամի,  
 որ էր թվ. ՌԿԵ. ազգամբ չարին եկն ի սուրբ  
 Երուսաղէմ մուֆտի մի, որ կոչէր Ասատ  
 էֆէնտի, եւ տեսեալ զեկեղեցի վայելչութիւն  
 եկեղեցեաց Աստուծոյ՝ մախացաւ չար նա- 5  
 խանձով, էսո դմեծ եկեղեցին Համբարձման  
 եւ հուպ նմին մէջիթ եւ մզկիթ կանդնեաց.  
 զոր վաղուց հետէ շէխերն եւ քաղքի Տաճիկքն  
 նախանձէին եւ ոչ կարէին առնուլ, զի Պարոն- 10  
 տէրն արդ առնէր, բողոքէր ի Սամսուլ, այլ եւ  
 երթայր Հալապ, Ծամ, կաշառօք վրկէր. բայց  
 մուֆտիս բռնութեամբ էսո, զի էր մեծազն,  
 այլ եւ սիրելի եւ խորհրդակից խօնթարին:  
 Եւ եղեւ մեծ սուգ ամենայն քրիստոնէից. եւ  
 այս վասն ծովացեալ մեղաց իմոց արար վա՛յ 15  
 ինձ որ տեսի դայն կակիծն: Այլ եւ խիտ շատ  
 տուրք ու տալիք ունի Պարոնտէրն. ի տարին  
 ԲՈՒ դուռուչ եւ այլ աւելի. եւ չկայ իւր դրամ  
 մի, ոչ հայ. զի սաֆի Արապիստան է. միայն  
 Մսրը եւ Հալապ կան Հայք, քան աւուր ճա- 20  
 նապարհ: Թէ ուխտաւորք զան, կու խարճի  
 դրամ. ու թէ չի գան՝ չունի այլ տեղաց  
 դրամ մի:

233 օր չկայ:  
 1 սյամ: — 2 ասամամբ: — 6, նաեւ 31, 64 եկե-  
 ղեցիներ: — 10 փողոքէր:

ՍՈՒՐԻ ԼՈՅՍՆ — ՆՈՒՆԻՐԻ  
 ՀԱՊԱՇՈՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Եւ ի մեծի չարաթ օրն մտնու Պարոնտէրն  
 25 ի սուրբ Յարութիւն քահանայիւք եւ ամենայն  
 ուխտի մանկամբ: Նոյնպէս եւ ամենայն ազգ  
 առաջնորդաւ իւրով. եւ լինի մէջ Յարու-  
 թեանն բազում ժողովուրդ եկաց եւ բնակաց,  
 հաւատացելոց եւ անհաւատից. եւ ամէն ազգ  
 30 մտնայ իւր մատուռն. եւ Հայք՝ Վերնատունն.  
 եւ որչափ մեծ է եկեղեցին՝ պատեն խումա-  
 ասին թէ դայն մախմուր վարադայրքն Հայա-  
 շու թագաւորն է զրկել ի պատիւ սուրբ Յա-  
 35 րութեան. եւ ամէն տարի կ'առաքէ. ապա  
 վասն սաստիկ հեռաւորութեանն հաղարէն  
 մէկն չի հասնիր. եւ զի ճանապարհն ամայի է  
 եւ անմարդարնակ, եւ ի տեղիս տեղիս այլ եւ  
 այլ բարբարոսք բնակեալ են եւ Տաճիկ սինօրն  
 40 Ասը Արսինն. սորա չթողուն հասնել՝ թէեւ  
 հեծելօք զան. եւ տարի մի ՈՄՈՒ ոսկի զրկել էր,  
 թախած էր, զոսկին առած եւ մարդիկն սպա-  
 նած. միայն երկու հարեղայք զերծեալ եկին  
 եւ անդ մնացին, զոր եւ մեք տեսար զնոսա. 45  
 որք էին սեւ իրբեւ գործելի, միայն առա-  
 մունքն սպիտակ. նոքա պատէին վասն մեծու-  
 թեան եւ փարթամութեան թագաւորին. այլ  
 թեան եւ փարթամութեան պատիւ ունին ի Տաճ-  
 եւ վասն Միլ սուլին պատիւ ունին ի Տաճ-  
 կաց, զի դեսն ի նոցանէ դայ. եւ թէ կամին՝  
 50 արդիւն եւ չթողուն: Եւ սքանչելի ջուրս այս  
 որչափ քրիստոնէից աշխարհով գայ, ստակ եւ  
 որչափ քրիստոնէից աշխարհս անհա-  
 լատից պղտորի, չիթթի եւ փոխէ զգոյնն.  
 փա՛ռք Աստուծոյ:  
 55 Իսկ նոքա բնաւ չտան դաֆար. ոչ չորս  
 ոսկի դուռն՝ վասն ջրին Միլ. վասն որոյ եւ  
 նոքա յառաջ թափօր կ'ելնեն եւ նախ մտնու  
 եւ լոյս հանեն, ապա այլք. եւ պար առեալ  
 շուրջ զԳերեղմանաւ Քրիստոսի, ունին որպէս  
 60 վրան, զոր նովաւ շրջին. չարիար զարնեն, այլ  
 եւ ծնծղայս եւ ազազակեն. Գիրիէ լէզիօն՝  
 եւ համեղ եղանակաւ. նոյնպէս եւ ա-  
 քաղցր եւ համեղ եղանակաւ. նոյնպէս եւ ա-  
 մենայն խաչապաշտք գոչեն՝ ամենայն ազգ  
 իւրեանց լեզուաւ, մինչեւ գոռայ եկեղեցին:  
 65 ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ԿԱՆԹԵՂՆ

Բայց Հայոց՝ Պարոնտէր կամ դասասաց  
 վարդապետ մի ելանէ ամպլոնն եւ սկսանի քա-  
 27 արութեանն: — 30 մտնա: — 34 արութեանն:  
 — 42 մարդիք: — 52 աշխարհս:

76 երեղ: — 81 ի չիֆ: — 85 կարողութեան:  
 — 87 դա: — 89 ի չիֆ: — 106 բունբայ: — 111 ի չիֆ:  
 1 Κύριε, ἐλέησον.

րողել եւ ծանուցանել վասն լիման լուսոյն,  
 ապա յորդորէ զժողովուրդն երանի տալով նո-  
 ցա, որ այնմ ժամու հանդիպեցան. վասն որոյ  
 պարտ է ահիւ եւ զողութեամբ, զղջմամբ եւ 70  
 պաղատանօք եւ խոստովանութեամբ եւ սրբու-  
 թեամբ արժանանալ տեսլան լուսոյ եւ մեծաւ  
 պատրաստութեամբ սպասուորել նմա: Իսկ  
 դառն աղքատքն որ մնացին ի դուռն, լան եւ  
 սղբան եւ խնդրեն զի մուծցեն զնա: Իսկ նոքա 75  
 առեն թէ Ոչ. իրեք կամ երկու ոսկի տվէք.  
 իրբեւ երդնուն թէ չունիմք եւ ոչինչ, ապա  
 մերկացուցանեն եւ մի մի որոնեն զամենայն  
 տեղիս. իրբեւ ոչ գտանեն, ապա առաքեն եւ  
 կոչեն զթարճիմանն եւ ասեն. Զինչ տայք՝ 80  
 սուք, զի մի զրկեսցին ի լուսոյն: Եւ նա զնա-  
 ցեալ ասէ Պարոնտէրին. եւ Պարոնտէրն յոր-  
 դորէ զխոճայնին, աղաչէ եւ խնդրէ վասն սի-  
 լունն Գրիստոսի, թէ Մի թողուք զնոսա ի դուրս  
 մնալ, այլ ըստ կարողութեան ձերոյ տվէք որ 85  
 նոքա այլ տեսնեն զլոյսն: Եւ որոց ծագէ սուրբ  
 Հոգին՝ դայ եւ ասէ. Ես մինն բերեմ. միւսն  
 ասէ. Ես երկու. եւ ոմն՝ իրեք կամ չորս,  
 հինգ. եւ այսպէս զբազում մուծանեն ի Յա- 90  
 րութիւնն. եւ թէ մնայ ժ, ԺԵ հողի, թարճի-  
 մանն զնացեալ ասէ. Սորա կողմք են, այլքն  
 կաղ, ձեռնատ, անկար, թող Աստուծոյ սի-  
 լունն համար եւ խօնթարին գլխուն համար  
 լինի եւ արեւուն լինի. մէկ մէկ օրք կտրէ զնո- 95  
 սա: Նոքա խայիլ կու լինին. Լաւ է, ասեն, որ  
 ստնունք շատ թէ քիչ, քան թէ ոչինչ: Քանզի  
 նախթլամայ ալ կայ, թէ ոք լուսոյն ժամն չի  
 թողու: Եւ ասին թէ ժամանակ մի այտպէս  
 Փախիր Փուխարայնի մնացել են ի դուրս. չէ  
 100 թողած պէնկղար դրամով, թէ թամամ տվէք.  
 եւ նոքա այնպէս մնացել են մահուամբ. եւ յոր-  
 ժամ լոյսն ելել է՝ դուրսն է վազել նախ վասն  
 աղքատաց եւ դուռն երկու կողմն մարմարէ եր-  
 կու սեան գլուխքն այրել է. զոր տեսեալ բազ- 105  
 մաց՝ փառս տային Աստուծոյ. եւ մինչեւ  
 ցայսօր երեւի տեղին բունբամ հրազոյն. զոր  
 ծանուցին խօնթարին. եւ նա հրացեալ հրա-  
 ման եւ պարաթ զրկեց յերուսաղէմ նախթ-  
 լամայով, որ աղքատք թէ չունենան եւ երդ-  
 վին թէ չունին՝ թողցեն զնոսա ի ներս, զի 110  
 մի զրկեսցին ի լուսոյն. զոր եւ մեք տեսար  
 դայն սիւնսն աչօք մերովք այրեալ եւ սեւա-  
 ցեալ. եւ դայն էմրն քանդեալ ի վերայ քա-  
 ռեայ տախտակի Յարութեան դուռն ի հրաչա-

76 երեղ: — 81 ի չիֆ: — 85 կարողութեան:  
 — 87 դա: — 89 ի չիֆ: — 106 բունբայ: — 111 ի չիֆ:

115 փառաց լուսոյն . զի զիրն տաճկերէն զբաժ է : Դարձեալ վարդապետն յորդորէ զժողովուրդն ասելով , թէ Վասն սիրուն Աստուծոյ եւ սուրբ լուսոյն խաթերն՝ սովէք ողորմութիւն , զի զայն մնացած աղքատքն ալ մտցեն ի ներս . իսկ 120 սղորմածք եւ զթածքն տան վաղվաղակի ըստ կարեաց եւ վճարեն զնոսա եւ մուծանեն ի ներս . եւ լինի մեծ ուրախութիւն եւ ցնծութիւն : Եւ այն զատկի զիչերն Յարութեան զուռն բաց մնայ եւ ցորեկն , զի յովով Տաճիկք 125 գան եւ նստին հայել զարարողութիւնս քրիստոնէից :

Իսկ աւագ հինգշաբթի իրիկունն զայ չէի մի եւ զատին , այլ եւ սուպաչին , եւ զամէն կանթեղան շիջուցանեն . եւ Քրիստոսի զուպին 130 զուլին մօհրեն զատին եւ սուպաչին եւ երկու չէի . եւ եասախէք պահնորդ զնեն . զի մի նենկութիւն կամ հիլա լինիցի . եւ մնան մինչ շաբաթ իրիկունն : Եւ առ հասարակ ամենայն խաչապաշտք աղաղակեն եւ պար առեալ շուրջ 135 զգերեզմանաւ Քրիստոսի երգեն իւրեանց լեզվաւ եւ լալով հայցեն զալ լուսոյն : Եւ կարգաւորքն ամենայն ազգաց զգեստաւորին աւաջնորդօք : Ապա եւ մեր առաջնորդն ողորմ ձայնիւ եւ ողբով ասէ ժողովրդեանն . Զգաստ 140 կացէք եւ զզոյշ լերուք ի մեղաց , զի մերձեալ է զալուստ լուսոյն . չի լինի թէ ձեր մէջն խոռով մարդ կայ կամ ոխապահ կամ պրոնիկ , կամ թերահաւատ կամ անղեղ կամ անխոստովանք . հանց իմանայք որ վասն մեղաց մերոց 145 արգելու Քրիստոս զլոյսն . եւ այլ բազում բանս խօսի եւ խրատ . ապա տայ ասել իրեք Տէր ողորմեա ողբաձայն : Զկնի իրեք անգամ գոչեն արք եւ կանայք երկիցս , ծերք եւ տղայք , թէ Լուսաւորչին փառօք փառք տամք Աստուծոյ . եւ ասեն շարական . Լուսաւորեա Երուսաղէմ , զի հասեալ է լոյս Քրիստոս . զարձեալ՝ Ուրախ լեր սուրբ եկեղեցի . եւ յանկարծակի լինի որոտում եւ գոռացմունք , մինչեւ ստանիլ ոմանց . ապա սկսանին զալ աղանիք , երթեակ 150 թեւեկ առնել ի գմպէթն . զարձեալ կարգան եւ աղաղակեն՝ Տէր ողորմեա՝ ժողովուրդն , երկիցս եւ երիցս , եւ թէ Լուսաւորչին փառօքն փառք տամք Աստուծոյ : Դարձեալ գոռայ եւ թնդայ սուրբ գերեզմանն Քրիստոսի . եւ պատրաստքն եւ զգեստաւորեալք կարգաւորք առնուն ի ձեռս խաչ , աւետարան , բուրվառ , խաչալամ . իսկ սարկաւառք , զպիքք եւ կղե-

րիկոսք քչոց առնուն , ծնծղայ . եւ այլք այլ ինչ : Եւ հրամայէ Պարոնտէրն հաշտիլ եւ համբուրել զմիմիանս , զի Քրիստոս ոչ գայ 165 առ մեղաւորս եւ ոխապահս , այլ փախչի : Եւ բարձրաձայն գոչեն իրեք Տէր ողորմեա . զկնի՝ Լուսաւորչին փառօք փառք տամք Աստուծոյ . եւ սաստիկ գոռայ սուրբ գերեզմանն եւ ճայթմունք լինի մեծամեծ . ուստի ճառագայթէ 170 լոյս եւ ելանէ պատուհան ի դուրս . ապա տեսեալ զլոյսն , աւիրեն զմօհրն : Եւ նախ մտանէ հապաչն . զկնի հայն , ապա հոռոմն : Եւ մեր Պարոնտէրն Յովհաննէս կաթողիկոսին հրամեցէք արար . եւ զգեցաւ շուրջառ , եմիկոս 175 րոն , եւ զթագն եղ ի գլուխ որպէս ի ժամ սուրբ պատարագին . եւ տեսին զՀայոց կանթեղն վառած , ուստի եւ Լուսաւորչի կանթեղ կոչի , որ է խորած . անտի լուցանեն զպատրոյզան . եւ ելեալ ի դուրս կարգաւ ամէն աւաջնորդ իւր ազգին տայ լոյս . եւ նոցա առեալ չին գերեսս եւ զմօրուս եւ ոչ այրէ , զի դեռ 180 չէ հուր այլ լոյս . իրեք ձեռք անցնի , ապա այրէ . եւ ապա սկսանին մի ըստ միովէ կարգաւ մտանել ի մատուռն : Եւ սուրբ Գերեզմանն կարմիր է եւ խզմիչ եղել , ջերմ . եւ քրտունք հոսին որոնածեւ , զոր զպատանքն սրբեն ի վերայ . եւ այն է ի վերայ պատանայ որպէս ազա քրտինքն , որ երեւին : Եւ վառեն ժի կանթեղս . եւ կանդնին ի պատարագ որչափ մատուռ կայ : Եւ զկնի պատարագաց անդ մնան զգիչերն՝ ամենայն ազգ ծոմապահք . իսկ 185 Հայք միայն խթին ի ձուկ , ի ձու եւ ի պանիր , զոր այլ ազգք տեսեալ ծիծաղին եւ նախատեն զմեզ : Զայս ամենայն տեսեալ Թուրքաց՝ գոչեն . Ալլահ , ալլահ . եւ զման ի տունս իւրեանց :

Բայց պատմեմ ձեզ սքանչելիս . որ յայսմ ամի եղեւ . զի լոյսն երկու ժամ յամեց եւ ոչ ելաւ . զոր Պարոնտէրն վարդապետօք , եպիսկոպոսօք մեծի տարակուսի լեալ եւ արտա- 200 սուախտուն սգով . այլ հնար չիմացան քան զաղաչելն զԱստուած . եւ անկեալ ի դռն ի վերայ երեսաց իւրեանց ազօթեցին յերկար . էր անդ եւ մեծ վարդապետն Ամթայ տէր Բարսեղ . աղաղակէին՝ Տէր ողորմեա մեզ , զի ի 205 քեզ յուսացաք , եւ չիք այլ ոք բայց ի քէն . ծագեա զողորմութիւնս քո , զի եղաք նախատինք զբացեաց մերոց , ծագր եւ այսպէս կատականայ . մի երբեք ասացեն հեթանոսք թէ ո՛ւր է Աստուած նոցա . Օգնեա մեզ Աստուած 210

123 արութեան : — 146 տա : — 146, 156, 166 ողորմեայ : — 150 յերուսաղէմ : — 159 թրնթայ :

163 ծնծղա : — 181 տա : — 182 զմօրուս : — 187 ողորմեա : — 204 յամթայ : — 206 ուսացաք : — 209 երբէք :

Փրկիչ մեր , վասն մեծի փառաց անուան քո . Մի մեզ , Տէր , մի մեզ , այլ անուան քում սրբոյ : Եւ յառաջեաց Գրիգոր պարոնտէրն եւ ի խորոց սրտէ խոստացաւ Աստուծոյ ի ծածուկ 215 Բի ծուր . եւ տէր Բարսեղն Ռ ծուր . եւ ապա ողորմածն Աստուած ողորմեցաւ եւ զթացաւ եւ առաքեաց զլոյսն՝ ուրախացուցանելով զքրիստոնեայս :

Եւ նիրհեալ սակաւ մի մէջ գիչերի՝ նախ 220 հոռոմն եհար ժամհար . իսկ կուրծունս սպետրէ էր ժամհարն եւ յոյժ համեղ եղմն եւ քաղցր ձայն ածէր , մինչ զի թմբեալ զմայլեցաք . ապա եւ Հայոց զարկին , փայտեայ , որպէս զանկակ հնչէր մէջ Յարութեանն , ահեղազոչ եւ աղ- 225 նիւ եղանակաւ . եւ սկսան հսկումն եւ գիչեւրապաշտօն մինչ ի լոյսն : Եւ առաջնորդն մատոյց պատարագ զատկի օրն վերաբերելով : Անդ էր տեսանել զբազմութիւն եպիսկոպոսաց , վարդապետաց , քահանայից , կրօնաւորաց , սարկաւառաց , եւ զգեստուց եւ զար- 230 րաց , անօթից եւ սպասուց . եւ ինքն զգեցեալ զուց , անօթից եւ սպասուց . Եւ ինքն զգեցեալ էր շուրջառ մի սափի սիրմայէ , Ստամպօլ րանած . եւ ասին թէ հազար զուռուչ կուռայի . զի ասին թէ ծանր բան է . եւ այլ զանազան 235 շուրջառնի սէրասէր եւ գէրպապէ քանի հարիւր . եւ այն գիչերն համբեցի կանթեղս եւ ջահս միայն սուրբ Յարութեանն՝ հինգհարիւր , զատ ի սուրբ Յակոբայ եւ այլ վանօրէից . եւ այս ամէնս Հայոց միայն էր : Զի էր 240 յայնժամ ազգս Հայոց պերճ եւ փարթամ քան զամենայն ազգս . կարծեմ թէ ի թագաւորաց ժամանակն այսպէս եթէ եղեալ է :

Նոյնպէս ժամակարգութիւնք եւ գրեանք , զորս գրել է սովել եւ զորս նորոգել՝ չկայ այլ 245 տեղ . զի զինչ գիրք կամիս՝ գտանես ի սուրբ Երուսաղէմ : Զայս ամենայն աչօք իմովք տեսի :

Եւ յայսմ ամի՝ 2 փախաւ հոռոմի պատրիարքն վասն պարտուց . զի ասեն թէ Ռ Ռ զուռուչ պարտք ունի : Ապա գոհութիւն ու փառք 250 Աստուծոյ , որ մեք այսպէս չէն եւ հաստատ տեսաք զմեր եկեղեցիքն . զի ժամանակ մի եւ Հայք այսպէս էին , որպէս յառաջ ասացաք :

Եւ զկնի Պատրիարգին երկրպագեալ ամենքեանքն՝ զարձաք ի սուրբ Յակոբ : Եւ որչափ մարդ կայր՝ զամէնն նա կերակրեաց այն օրն՝ Պարոնտէրն . զի էին աւելի քան զհազար 255 հոգի . ի վերայ տանեաց նստան եւ սուրբ Յա-

կորայ էրգեղն . կերաք գառն , հէրիսայ եւ խորու . եւ խմեցաք զանուչ զինին\* :

ՄԵԿՆՈՒՄՆ

Եւ զատկի շորեքշաբթին սկսան զնալ ուխտաւորքն . ոմանք ծովովք եւ այլք ցամաքով : Եւ անդ էր տեսանել զլայց եւ զհառաչ , յորժամ հրատարէին ի սուրբ եւ աստուածակոխ տեղեացն : Նախ ի սուրբ Բեթղէհէմ զնացաք . ապա ի սուրբ Փրկիչ եւ ի Ջառներն , ուր մեռեալք կային , ուստի հոտ անուչ բուրբ . եւ ասին թէ ով Ջառներն թաղվի , նորա մեղքն չլիչի , զի Քրիստոսի արեան զնով զնած է . ապա Գետսամանի եւ Աղբերն Աելովամ , եւ Գերեզման Աստուածամօրն , Հրեշտակապետ . եւ Սուրբ Յարութիւնն՝ տալով վերջին ողջունն : Վա՛յ ինձ որ զրկեցայ այնպիսի վայրուչ եւ փրկաւէտ վայրաց . զի այնպէս կսկծելի թուէր մեր գնալն , որպէս ի գրկաց մարց : 15

Նոքա մտեալ կէմին՝ Ռամլայ ելին : Եւ ես եղկելիս ծախեցի զծիս եւ գնեցի լաւ էչ մի եւ ցամքով գնացի ընդ ուխտաւորս հետ տէր Դուկաս պարոնտէրին , որ երթայր նուիրակ ի լէհ . եւ ինձ հրամայեաց մի մեկնիլ ի նմանէ . որ եւ ես յանձն առի երթալ ընդ նմա մինչ ի լով՝ սպասաւորելով նմա յամենայն գործս եւ ի բանս :

Էր ընդ մեզ եւ հոգեւոր տէրն Յովհաննէս կաթողիկոս : Վասն որոյ պարոնտէր Առաջնորդն ուղարկէր զմեզ մինչ ի ԶԵՄԵԼՈՒՆ , որ է կէս խօնախ : Իսկ մեք երթալով երթայաք եւ լայաք . եւ յետս զարձեալ հայէաք ի սուրբ յերուսաղէմ եւ հառաչէաք ի խորոց սրտէ : Եւ այս Զէջմէլուս երկու մեծ շաշմա կայր , ուստի յորդ աղբիւր ըխէր : Դարձեալ պարոնտէր Գրիգորն կերակուր երեւտ եւ անուչ զինի , այլ եւ փիլաֆ ետ եփել եւ միսթարէր զմեզ սիրով . եւ զգիչերն անդ օթեցաւ ընդ մեզ :

Եւ ընդ առաւօտս կանխեալ օրհնէր զմեզ եւ ուղարկէր ընդ երկայնաձիգ ճանապարհն : Եւ մեք անկեալ յոտս նորա՝ համբուրէաք զգարչապարս ոտից նորա լալով եւ մորմոքելով զհրատարական վերջին ողջոյնն տալով . եւս առաւել զգրկուումն մեր հոգեւոր հօրէն բազմերակտ ախոսեալք : Եւ տվեալ ամենայն ոք ըստ կարեաց՝ ժամուց , զաջն համբուրէաք . եւ 29 հառաչէաք : — 34 յօթեցաւ : — 38 սոս :

\* Սիմէոն հոս երկար գովք մը կը հիւսէ Ս . Տեղեաց վրայ (Ձեռ . , 300—304) . հրատարակուիւնը կը վերապահեմ ուրիշ տեղով :

223 փայտեա : — 224, 237 արութեանն : — 240 այնժամ : — 247 այսմ , պատրիարգն :  
2 1617 :



ՅՈՎ. ԶԱԿՈՒԲԱՆ, Ազրիբներ Հայաստանի եւ Անդր-կովկասի պատմութեան: Ուղեգրութիւններ: Զ. հատոր. ԺԹ. դարի առաջին քառասունակ (1800—1820): Երևան, Պետհրատ, 1934, 80, էջ Ը + 884 + 1 քարտէս: Գինն՝ 20 ռ.: [Հրատ. Մեխակեան ֆոնդի, Թ. 16:]

Ուղեգրութիւններու Ա. հատորէն (տե՛ս Հանդ. Ամս., 1933, էջ 636—638) ետքը մեծ ուսումնով մը հրատարակ կու գայ Զ. հատորը. պատճառը չէ բացատրուած:

Այս հատորը կ'ընդգրկէ 20 տարուան շրջան մը. նկատի առնուած են հետեւեալ ուղեգրները Զոն Մալկոյմ (1800 եւ 1816), Զօրավար Գարդան (1807—1808), Պ. Ամեդէ Ժորբեր (1805—1806), Զէյմա Մորիէր (1808—1816), Ֆրայզան (1812), Ուլիլոյ Աուզլէյ (1810—1812), Մորից Փոն Կոցեպու (1817), Գնդ. Զոն Զոնսըն (1817) եւ Ժորբերտ Կեր Պորտեր (1817—1820):

Ներածութեան մէջ կը ներկայացնէ խմբագիրը ԺԹ. դարու առաջին քառորդի քաղաքական դրութեան վրայ պայծառ տեսութիւն մը, ուսկից երեւան կու գայ թէ Բոնապարտի աշխարհակարական ձգտումներու դէմ եւրոպական պետութիւններու մղած կռիւները

իրենց արձագանգը տուած են նաեւ Իրանի եւ Կովկասի մէջ: Յիշեալ ուղեգրներէն ոմանք իբրեւ քաղաքական գործիչներ անցած են Արեւելք. եւ քաղաքագէտի ակնոցով դիտած են Ժողովուրդներու նիստն ու կացը, տնտեսական պայմաններն եւ քաղաքակրթական ձգտումները:

Այս պատճառաւ ալ յաճախ յուսարուութիւններ պիտի ապրի ընթերցողը: Հայ երկրի վրայ, հայ Ժողովուրդէ շրջապատուած՝ ուղեւորը աւելի տիրող իշխանական տուներով կը զբաղի քան բնիկ Ժողովուրդով: Բայց եւ այնպէս պակաս չեն հետաքրքրական ակնարկութիւններ նաեւ հայ Ժողովուրդի տնտեսական եւ քաղաքակրթական պայմաններու վրայ: Շահեկանութեամբ կը կարդացուին ներկայացուած ուղեգրութիւնները:

Ուղեգրութիւններու թարգմանութիւնը տեղ տեղ տկար կողմեր կ'երեւցնէ. բազմալի է որ հայերէն լեզուն ալ ունենար իւր գեղարուեստական կատարելութիւնն, ինչպէս հատորին ներքինն եւ արտաքինը ցոյց կու տան, ընտիր նկարներովն եւ գեղեցիկ տպագրութեամբը: Պ. Է.

**Resumé der wichtigsten Abhandlungen.**

**Der Katholikos Moses III.** Zum 300jährigen Todestag. Von P. N. Akinian. Sp. 481—533.

§ 21. Die Beziehungen des Katholikos Moses zur katholischen Kirche. Moses verkehrte mit den Unierten in Armenien und mit den lateinischen Missionären freundlich. Sein Standpunkt war: die Beziehungen der christlichen Kirchen zueinander sollten auf Liebe beruhen. In Isfahan lernte er die unbeschulten Karmeliter kennen. Durch sie angeregt, trat er in Briefwechsel mit dem Heiligen Stuhl. Seine Geneigtheit zur Union bekundete er in mehreren Schreiben an den Heiligen Stuhl. Dem Verfasser ist aus dem Propagandaarchiv eine Anzahl von Korrespondenzen zugänglich, auf Grund welcher er die Unionbewegung

beschreibt, die in den Jahren 1625 bis 1633 sich entwickelte. Die Dokumente werden in armenischer Übersetzung wiedergegeben.

§ 22. Gregor von Caesarea und der Katholikos Moses. Gregor war ein Gegner der Union. Er protestierte gegen das Schreiben, das Moses im Einvernehmen mit zwölf Bischöfen an den Heiligen Stuhl gesandt hatte. Ein Mahnbrief von ihm an die Mönche von Etschmiadzin wird veröffentlicht.

§ 23. Paolo Piromalli und der Katholikos Moses. Der Dominikaner Paolo Piromalli wurde am 31. Mai 1631 nach Armenien geschickt, um in der Nachitschevaner Diözese dem neugegründeten katholischen Seminar als Rektor vorzustehen. Ihn traf das Mißtrauen des Erz-

bischofs Augustin. Moses' Vermittlung, um den Prälaten mit Piromalli zu versöhnen, mißlang. Piromalli wurde verhaftet; erst nach 22monatiger Kerkerhaft erlangte er die Freiheit durch Intervention von Papst Urban VIII.

§ 24. Die armenische Kaufmannschaft und der Heilige Stuhl. Die armenischen Kaufleute von Djulfa waren für die Union. In einem Gesuche an den Heiligen Stuhl erbaten sie Zollfreiheit und Freilager in christlichen Hafentädten. Die Propaganda erklärte sich bereit, diese Gunst ihnen zu verleihen.

§ 25. Versuche, in Rom ein armenisches Seminar zu eröffnen. Schon Gregor XIII. plante, in Rom ein armenisches Seminar zu gründen. Es gab zwar in Rom armenische Alumnien, aber kein Seminar. Im Jahre 1624 tauchte der Plan wieder auf. Diesmal dachte der Heilige Stuhl, das Seminar in Goa zu errichten. Paolo Cittadino, Bischof von Mira, sollte an Ort und Stelle die Möglichkeit studieren. Im Jahre 1627 ist er bei der Heimreise gestorben; er hinterließ 2212 Realen zwecks Errichtung des beabsichtigten Seminars in Rom. Die Djulfaenser kamen im Jahre 1630 mit einem Vorschlag, dieses Seminar auf größerer Basis zu errichten. Die Kosten wollten sie selbst bestreiten. Die Propaganda begrüßte diesen Vorschlag freudig. Doch der plötzliche Tod des Katholikos sowie des Bischofs J. Tadeo ließ diesen Plan nicht zur Ausführung kommen. Die Propaganda kehrte zu ihrem früheren Projekt zurück.

§ 26. Die armenische Bibelausgabe. Es war ein Plan der Armenier, in Rom neben dem Seminar auch eine Druckerei zu haben, worin man zur geistigen Entwicklung des Volkes nützliche Bücher, in erster Reihe die Bibel drucken konnte. Diesbezüglich soll Joh. Tadeo des näheren mündlich gesprochen haben. Armenische Charaktere besaß die vatikanische Buchdruckerei seit 1579 und hatte schon manche Bücher veröffentlicht. Bedenklicher erschien der Propaganda die Bibelausgabe. Die armenische Übersetzung sollte genau geprüft werden.

Als Johannes Molino aus Smyra die Wichtigkeit der römischen Bibelausgabe betonte mit der Behauptung, daß die Armenier vorhätten, dieselbe in Holland bei den Protestanten zu drucken, beeilte sich die Propaganda ihm mitzuteilen, daß sie die Edition schon in Angriff genommen habe. Da sie vernommen hatte, daß die Fratres Unitores eine Vulgataübersetzung verfaßt haben, so beauftragte sie den Augustin, eine Kopie davon baldigst ihr zukommen zu lassen. Die Sache verzögerte sich zu lange und kam in Rom nie in Ausführung, bis Oskan zuerst im Jahre 1660 in Amsterdam eine armenische Bibel herausgab.

§ 27. Moses als Schriftsteller. Es ist uns unter Moses' Namen nur ein Nekrolog zum Tode des Katholikos Serapion († 606), welcher der Lehrer Moses' war, erhalten. Diese Schrift ist in Prosa und Versen verfaßt, worin der Dichter von seiner kindlichen Anhänglichkeit zum Lehrer Zeugnis gibt.

§ 28. Charakteristik. Es folgt eine Charakterschilderung des Katholikos als eines energischen und weitblickenden Prälaten, welcher Kirchen und Schulen gründete, die geistige Bildung und wirtschaftliche Entwicklung Armeniens förderte, in fast heiligmäßiger Weise unermüdlich für die Hebung der Moral und kirchlichen Sitte gegenüber Verfallserscheinungen tätig war, ... eine säkulare Persönlichkeit, von den Zeitgenossen der „Zweite Erleuchter“ genannt, welcher der armenischen Nation und Kirche, die kaum mehr atmeten, neuen Odem eingehaucht hat.

**Zur Anthropologie der Armenier.** Von P. Essabalian. Sp. 534—547.

Die Farbenuntersuchung der Haut, der Haare und Augen der Armenier hat folgende wichtige Ergebnisse geliefert. Die Hautfarbe der Armenier im Heimatland weist einen erdrückenden Prozentsatz von braunen Tönen auf, der ohne Zweifel in der Diaspora viel einbüßt. Sehr wichtig für den ethnischen Bestand des Volkes ist die Tatsache, daß kein gelbfärbiger Armenier vorkommt; dies, wie